

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ղ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԻԻԶՊԱՇԵԱՆ — ԿԻՒՂԵՆԿԵԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆԻ — ԱՄՄԱՆ

Աշակերտութեան թիւն է 189-140 հոգի նախակրթարան եւ 49 հոգի Մասնակաւարտէզ, 99 մանչ եւ 90 աղջիկ: Այս տարի 38 նոր աշակերտներ ունեցանք, իսկ այս տարւայ չըմանաւարտ դասարանը 12 հոգի է:

Կրթական նախարարութեան օրէնքներուն համաձայն, բոլոր դասերը, բացի հայերէն լեզուէ եւ կրօնքէ, կը դասաւանդուին արարերէն լեզուով: Առաջին դասարանէն սկսեալ կը դասաւանդուի նաեւ անգլիերէն լեզու: Նախարարութեան քննիչները այցելեցին դպրոց, ներկայ գտնուեցան դասերու եւ շատ գոհ մնացին դպրոցին կրթական մակարդակէն:

Ունինք 13 ուսուցիչներ, 12 մնայուն եւ 1 այցելու: Կը ցուէինք որ տարուան կէսին կորսնցուցինք Պրն. Հայկ Գարագաշեանը որ Կրթական նախարարութեան մէջ գործ գտաւ: Իրեն կը մաղթենք յաջողութիւն: Այս դժուար տարին, բոլոր ուսուցիչներն ալ զիտակէց աւ պատասխանատու գտնուեցան իրենց յանձնուած աշակերտներուն նըկատմամբ: Գաղաքային պատերազմի պատճառաւ դպրոցները Նոյեմբեր 9ին բացուեցան ու մինչեւ Մարտ 1971 Հայոց լեռը աւանպահով չըլնան մը նկատուած էր: Այս պայմաններու տակ, միայն 2 օր ստիպուեցանք դպրոցը դոցել: Դպրոցին Տնօրէնութիւնը բարձր կը դնահատէ ուսուցիչներու պատասխանատուութեան ոգին եւ հրապարակաւ, շնորհակալութիւն կը փափաքէ յայտնել անոնց:

Դժբախտաբար Ազգային Խորհուրդի աւերամաղրած սենեակները, ուր հաւաքած էինք պարտիկ դրաղարան մը, կոխներու ծաւանակ գործածուեցան որպէս պատուապարան ու զերբերուն մեծ մասը փնցացաւ: Այս ա-

մաս կը մտածենք դպրոցին ճաշարանը վերանորոգել տալ ու դրաղարանի վերածել: Այս նպատակին համար Տիար. Վ. Ղազարեան Լուսիա Ղազարեան Փօտար բարձրացուց 50 տինարի, որ պիտի յատկացուի դրաղարանին:

Գաղաքական պայմաններու բերումով, անցեալ տարի չկրցինք Ամալներջի հանդէս ունենալ: Այդ չըմանաւարտներէն ոմանք այսօր պիտի ստանան իրենց վկայականները: Նախակրթարանի հանդէսները կազմակերպելը միշտ ալ դժուար եղած է, բայց՝ ինչպէս ուրիշ տոխիթներով ալ ըսած եմ, մենք կը հաւատանք որ դպրոցական դասերու չափ կարեւոր են այս հանդէսները: Համարձակութիւնը եւ ինքնազմատահութիւնը, որոնք անհրաժեշտ են տղուն ընկերային զարգացման համար՝ բեմով ու հաւաքական աշխատանքով կը զարգանան տղոց մէջ:

Դպրոցին մէջ կրցանք տօնել Բարեգործականի Օրը, Ապրիլ 24ը եւ Վարդանանց տօնը:

Ինչպէս գիտէք, քաղաքային կոիւնքերու հետեւանքով դպրոցը յափաղանց փոխաւած էր: Գաղթականները գրաւած էին Մանկապարտէզի եւ Առաջին յարկը եւ հոն ապրած ամբողջ շարք մը: Նստարանները կտրելով կրակ շինած ու հաց եփած էին, լուացարանները բոլորովին աւերուած էին: Մեր առաջին գործը եղաւ զրել մեր բարերար կազմակերպութեանց ու պարզել մեր վիճակը: Երախտապարտ ենք որ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը բացառիկ օգնութիւն մը ըրաւ 1100 տոյար ներկի ու լուացարաններու անմիջական նորոգութեանց համար:

իսկ Հ. Բ. Ը. Միութիւնը 500 տոլար բացառիկ օգնութիւն մը ըրաւ կորուստ նստարաններու ու փեղկերու նորոգութեանց համար: Այս օժանդակութիւնները զործած-

ուելոյան իրենց նպատակին, ինչպէս կ'երեւի հաշիւներուն մէջ: Մտացած գումարները պիտի յատկացուին նոյն նպատակին՝ ամառուայ արձակուրդի ընթացքին:

Արտասահմանէն օժանդակութիւններ կու գտն դպրոցին հետեւեալ ձեւով:

Հ. Բ. Ը. Մ. Յորդանանի դպրոցներուն	4300 տոլար	
Թորոսեան կտակէն	800 տոլար	5,100 տոլար
Բացառիկ օգնութիւն նորոգութեանց համար		500 տոլար
		5,600 տոլար
		= 2,075 տինար
Կիւլպէնկեան Հիմնարկութենէն	1375 տոլար	
Բացառիկ օժանդակ. նորոգութեանց	1100 տոլար	2,475 տոլար
		= 880 տինար

Այս երկու բարերար կազմակերպութիւններէն այս տարի ստացանք մօտ 3000 տինար, որ դպրոցին ծախսին հարիւրին յիսուսէն է: Թոշակներէն գոյացաւ 1900 տինար, դպրոցին եկամուտին մօտ հարիւրին 35ը: Կ'ուզեմ որ բոլորիդ մտքին մէջ յստակօրէն չեշտուի որ այն ուսումը որ ձեր գաւակները կը ստանան Հ. Բ. Ը. Մ. ի Իգպաշեան Վարժարանին մէջ անկարելի պիտի ըլլար ծնողներու վճարածովը, առանց դուրսէն եկած իշխանական օգնութեանց:

Տեղական բարերարներու առաջին գծին կու գայ Հայ Օգնութեան Միութիւնը, որ այս տարի 300 տինար վճարեց, 20 չքաւոր սաներու որպէս թոշակ: Ազգային Մարդական Միութիւնը կը պահէ 3 սան ու կը վը-

ճարէ 50 տինար: Քաղաքիս ազգայիններէն Տիկ. Զարուհի Փէլթէքեան եւ Օրդ. Շ. Փաշտեան կը պահեն սաներ դպրոցին մէջ: Ասոնցմէ զատ դպրոցը ունի մօտ 15 աշակերտներ որոնք ձրի կը պատասխարուն դրպոցին մէջ:

Մանր նուէրներ ստացանք ծնողներէ՝ Հալուստ, զրամ, ուսուիրէ եւայլն, որոնք լաճենցիներ չքաւոր աշակերտներուն: Կ'ուզեմ յիշել Տիկ. Տումանեան, Տիկ. Վիլլիթ Փէլթէքեան, Տիկ. Կրէյս Էթեմէզեան, Տիկ. Պէրպէրեան, Տիկ. Շուշիկ Էթեմէզեան, Տիկ. Արաքի Գրիգորեան:

Ստորիւ կու տանք դպրոցին տնտեսական միճակը 1 Սեպտեմբեր 1970էն մինչեւ 30 Յունիս 1971 - 10 ամիս:

Մ Ո Ի Տ Ք

		Տինար
Հ. Բ. Ը. Մ. դպրոցներու օժանդակութիւն	5,100	
Բացառիկ օգնութիւն	500	2,075
Կիւլպէնկեան Հիմնարկութենէն	1,375	
Բացառիկ օգնութիւն	1,100	800
Թոշակներէ գոյացած		
Ծնողներէ	1,600 տինար	
Հ. Օ. Մ. - 20 աշակերտ	300 տինար	
Ա. Մ. Մ. - 3 աշակերտ	50 տինար	
Տեղական բարերարներ	50 տինար	2,000
Ինքնաշարժի դանձումներ, 8 ամիս		420
Օրացոյց, դասադիրքեր եւ զանազան մանր եկամուտ		250
Պատրաստ գումար 1. 8. 70 չրջանի		220
		5,845

Ընդհանուր մուտք

Ե Լ Ք

Շէնքի անմիջական նորոգութեանց եւ զարոյցական կարասիներու համար	292
Դասագրքերու, աշակերտներու խաղալիք եւայլն	130
Ինքնաշարժի վճարումներ, 9 ամիս	669
Վարչի ամսական	264
Երկրորդ թաքսի	126
Կարածի վարժք	24
Պէնդին	140
Նորոգութիւններ	115
Ջուր, էլեքտրականութիւն, հեռաձայն եւ զանազան ծախսեր	198
Ուսուցիչներու վճարում, 9 ամիս	2,977
	4,251

Ամստուայ ընթացքին նախատեսուած ծախսեր Կ

Ուսուցիչներու ամսականներ, 8 ամիս 1,000

Ինքնաշարժի ընդհանուր նորոգութիւն 400

Շէնքի նորոգութիւններ

Լուսացարան, գրադարանի յարդարում, ներկ,

նոր նստարաններ, սանիթի նորոգութիւն,

խաղաղավայրի նորոգութիւն

1,000

Այս նորոգութեանց համար ստացած ենք

Հ. Բ. Ը. Մ. եւ Կիւլպէնկեանէն 1,600 տոմ

-288

յար, մօտ 580 տինար որմէ միայն ծախսուած է

712

292 տինար: Մնացեալ 288 տինարը

պիտի յատկացուի այս նորոգութեանց եւս

6,363

Ընդհանուր ծուտք

5,845

Պիւտճէի նախատեսուած մօտ. բաց

518 տինար

Առաջին տարին է որ պիւտճէի բաց մը կ'ուրուագծուի մեր անջելը: Ամստուայ նախատեսուած ծախսերը, մօտաւոր ըլլալով հանդերձ, անհրաժեշտ են: Տարիներէ ի վեր ձգձգած ենք չէնքի եւ կարասիներու ու խաղաղավայրի նորոգութիւնները: Ինքնաշարժը ղալորոցին վերջին օրը ճամբան մնաց, իսկ մանկավարժէրի լուսացարաններու շինութիւնը մեղի պարտադրուեցաւ Կրթական նախարարութեան կողմէ: Նաեւ ստիպուեցանք պետական յաւելումները ընել մեր ուսուցիչներուն: Պզտիկ զպրոցի մը պիւտճէն հաւասարակշիւ չէր զժողարէ երբ երկրորդական բաժին չկայ ու փոքրաթիւ աշակերտութիւն կայ — մեր պարագային 190 հոգի: Ամմանի գաղութը տարուէ տարի կը նուազի, իսկ ուսուցիչներու ու կեանքի սըղութիւնը կը բարձրանայ: Թողակները դժուար է բարձրացնել ներկայ տնտեսական

տապանապի՝ Հետեւանքու: Ծնողները կը վշտանան 2000 տինար, այսինքն իւրաքանչիւր աշակերտի համար 10 տինար տարեկան, երբ նոյն աշակերտին ծախսը տարեկան 30 տինար է:

Կը պատճառէ որ նախ ծախսուի տեղեկագիրը պիտի վերջացնեմ մօտաւոր ու յոռետես չեւտով մը: Բայց կ'ուզեմ որ զարգութիւն միութիւններու եւ Ազգային Մարմնի ներկայացուցիչները որ հոս պատուած են մեր այս հանդէսը, տեղեկ ըլլան զպրոցին փեմակէն: Կը վախնանք որ ժամանակի ընթացքին զպրոցին այս բարձր մակարդակը չը կարենանք պահել մեր միջոցներով:

ԱՆԱՀԻՏ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

ՏՅՈՒՆԻՍԻ

26 Յունիս 1971

Ամման